

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾԱՆՈՒՆ ԳՐՈՂ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ

Նոյեմբերի 2-ին, հինգշաբթի օրը, Հայոց Հայրապետը Վեհարանում ընդունում է այցելությունը մեծանուն գրող Վիլյամ Սարոյանի, որը հայրենիքում էր գտնվում մասնակցելու համար Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակի հանդիսություններին և եկել էր Վեհարան՝ շնորհավորելու Նորին Սուրբ Օծության ծննդյան 70-ամյակը:

Հայոց Հայրապետի և Վիլյամ Սարոյանի միջև տեղի է ունենում ջերմ, սրտաբաց և հետաքրքիր զրույց, որին ներկա է լինում նաև բանաստեղծ Վահագն Դավթյանը:

Նոյեմբերի 3-ին Երևանում հանդիսավորությամբ նշվում է Վիլյամ Սարոյանի ծննդյան 70-ամյակը:

Այս առթիվ Հայոց Հայրապետը շնորհավորում է մեծավաստակ և հայրենասեր գրողի գրական-հասարակական բեղուն գործունեությունը հետևյալ ուղերձով.

ՄԵԾԱՏԱՂԱՆԴ ԳՐՈՂ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻՆ

Երևան

Սուրբ Էջմիածնից ուրախ սրտով ողջունում ենք Ձեր կյանքի յոթանասուն տարիները լեցուն փայլուն գրական ստեղծագործություններով, նվիրված մեր օրերի մարդկանց՝ ավելի արդար, ավելի խաղաղ ու ավելի մարդասեր մի աշխարհի երազանքով: Այդ է նաև դարավոր երազանքը հայ ժողովրդի: Որով, այս իմաստով Դուք Ձեր ամբողջ վաստակով հարազատ արտահայտիչն եք մեր ժողովրդի ճշմարիտ իղձերի:

Հարգանք Ձեր կյանքին ու Ձեր վաստակին: Նաև Մեր սրտից բխած բարի մաղթանք, որ դեռևս երկար տարիներ շարունակեք Ձեր գրական ստեղծագործական առաքելությունը միշտ հիշելով՝ Ձեզ սիրող և Ձեզանով հպարտացող Մայր Հայաստանը:

Մաղթում ենք նաև, որ Ձեր հեղինակավոր ձայնը միշտ բարձր հնչեցնեք աշխարհում, հոգուտ հայ ժողովրդի արդար սպասումների կենսագործման:

Աստուծո լույսով թող միշտ վառ մնա լույսը Ձեր տաղանդի:

Օրհնությամբ:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
2 նոյեմբեր 1978 թ.